Հավելված

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի

հուլիսի 7-ի N 1166-Լ հրամանի

Ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN	Նպատակ	Միջոցառումներ	Գործողության կատարման ընթացքը	**Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)**	**Գործողության չկատարման վերաբերյալ պարզաբանում**
			1. Պարենի առկայություն		
1	Հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության համակարգի ներդրում	1.1 Ոռոգման ջրի ստանդարտի մշակում	Ոռոգման ջրի ստանդարտի մշակման աշխատանքներն ընդգրկվել են 2024 թվականի պետական ստանդարտացման ծրագրում և համապատասխան ազգային ստանդարտի մշակումը կապահովվի մինչև տարեվերջ:	Ոռոգման ջրի վերաբերյալ ազգային ստանդարտի (ՀՍՏ) մշակում և գործողության մեջ դնում:	
		1.2Ագրոօդերևութաբանական նշանակության տարեկան 3-4 կայանների տեղադրում հանրապետության այն կլիմայական գոտիներում, որտեղ մոնիթորինգ չի իրականացվում և տեղակայված կայանների ցանցն համեմատաբար նոսր է	Աշխատանքներ են տարվում միջազգային կառույցների հետ ագրոօդերևութաբանական նշանակության կայանների տեղադրման նպատակով ֆինանսավորում ներգրավելու ուղղությամբ:		

		1.3 Հիդրոօդերևութաբանության և հողերի մոնիթորինգի համակարգերի արդիականացում	Ընթանում են ավտոմատ օդերևութաբանական կայանների և հողի խորքային ջերմաստիճանի և ձյան բարձրության չափման տվիչների տեղադրման աշխատանքները:	2023 թվականի պետական բյուջեից 200.0 մլն դրամ հատկացումների շրջանակներում ձեռք է բերվել 9 ավտոմատ օդերևութաբանական կայան և 20 հողի խորքային ջերմաստիճանի և ձյան բարձրության չափման տվիչներ, որոնց տեղադրման աշխատանքները դեռևս չեն ավարտվել:	
2	Բնական ռեսուրսների կայուն կառավարման միջոցով պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացում	2.1 Արոտների օգտագործման և կառավարման պլանի մշակում	Մարզի համայնքներում ավագանու որոշմամբ հաստատվել է արոտների օգտագործման պլանը՝ արոտների դեգրադացիայի կանխման և արոտների արդյունավետ օգտագործման նպատակով:	ՀՀ Արագածոտնի մարզ - համայնքների կողմից 2023 թվականի ընթացքում պլանը կիրառվել է մասամբ, ՀՀ Գեղարքունիքի մարզ - մարզի 5 համայնքներում առկա են արոտների օգտագործման պլանները ՀՀ Արարատի մարզ - Վեդի համայնքում նոր կարգով, արդեն կնքվել է 38 պայմանագիր, Արտաշատ համայնքում՝ 10 պայմանագիր, Արարատում՝ 2 պայմանագիր, Մասիսում՝ 1: Նշենք, որ այս տարի ավարտվում է նախկինում կնքված պայմանագրերի ժամկետները: ՀՀ Սյունիքի մարզ - որոշ բնակավայրերի արոտներում տարանջատվել են մանր և խոշոր եղջերավոր անասունների արոտավայրերը՝ դեգրադացիայի խնդիրների նվազեցման, բուսածածկի	

				պահպանման և արոտների ճիշտ օգտագործման նպատակով:	
		2.3 Օրգանական պարարտանյութերի տեղական արտադրության զարգացման ուղղված միջոցառումների իրականացում	«Օրգանական ծագմամբ պարարտանյութերի արտադրության և սպառման խթանումը Հայաստանում» թեմայով 2023 թվականի նոյեմբերի 15-ին տեղի է ունեցել աշխատաժողով, որին մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների, ինչպես նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) պատվիրակությունները: Աշխատաժողովի ընթացքում Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» (ԷԿՈսերվ) ծրագրի շրջանակում ներկայացվել են պարարտանյութերի արտադրության մի քանի սցենարների գնահատում, որի նպատակն էր ուսումնասիրել և վերհանել տարածաշրջանում օրգանական թափոնների վերամշակման ամենակայուն, արդյունավետ և տնտեսապես իրագործելի մոտեցումը: Հանդիպման ընթացքում ներկայացվել է նաև կատարված տեխնիկատնտեսական ուսումնասիրության արդյունքների մասին հաշվետվությունը:	Օրգանական ծագմամբ պարարտանյութերի արտադրության մի քանի սցենարների գնահատում, որոնք կիրառելի կլինեն Հայաստանում:	
3	Ագրոպարենայի ն արտադրանքի իրացման և	3.1 Արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացում	Նկատի ունենալով արտահանման մեծ կախվածությունը Ռուսաստանի Դաշնությունից՝ ՀՀ էկոնոմիկայի	Արտահանման շուկաների դիվերսիֆիկացիա	

	արտահանման ներուժի արդյունավետ օգտագործում		նախարարության առաջարկությամբ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից իրականացվել է Հայաստանի Հանրապետության արտահանման այլընտրանքային շուկաների համապարփակ վերլուծություն՝ գնահատելով Հայաստանի արտահանման խոցելիությունը, այլընտրանքային շուկաների ընտրության վրա ազդող գործոնները, լոգիստիկ դժվարությունները, ինչպես նաև առանձին պարենային ապրանքների համար (գինի, պանիր, ձուկ, լոլիկ, վարունգ, ծիրան, դեղձ և այլ բանջարեղեններ) արտահանման շուկաների դիվերսիֆիկացումը և մարտահրավերները: Արտահանման շուկաների դիվերսիֆիկացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով զեկույցն աշխատանքային կարգով ներկայացվել է ագրոպարենային ոլորտի մասնավոր հատվածի տնտեսավարողներին: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ արտաքին շուկաներում հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման, գործարար նոր կապերի հաստատման և համագործակցությունների ձեռքբերման, արտադրանքի արտահանման ծավալների աճի խթանման նպատակով Էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ՝ 1. ապահովվել է մասնակցություն՝ 1) ՌԴ-ի Մոսկվա քաղաքում 2023 թվականի փետրվարին կայացած «Պրոդէքսպո-2023» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդեսին, 2) ԳԴՀ-ի Նոյշտադ քաղաքում 2023 թվականի փետրվարին կայացած «Mundus Vini 2023» ցուցահանդեսին,		

			3) ԳԴՀ-ի Դյուսելդորֆ քաղաքում 2023 թվականի մարտին կայացած «ProWein 2023» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդեսին, 4) ՄԹ-ն Լոնդոն քաղաքում 2023 թվականի մայիսին կայացած «London Wine Fair» գինիների միջազգային ցուցահանդեսին, 5) ԽՀ-ի Պրորեչ քաղաքում 2023 թվականի մայիսին կայացած «Concours Mondial de Bruxelles 2023» միջազգային ցուցահանդեսին, 6) ՉԺՀ-ի Շանհայ քաղաքում 2023 թվականի նոյեմբերին կայացած Չինաստանի ներմուծման 6-րդ միջազգային ցուցահանդեսին, 2. նախատեսվում է ապահովել մասնակցություն՝ 1) ԳԴՀ-ի Բեռլին քաղաքում 2024 թվականի հունվարին կայանալիք «Կանաչ շաբաթ» ցուցահանդես-վաճառքին, 2) ԻԻՀ-ի Բաղդադ քաղաքում 2024 թվականի հունվարին կայանալիք Բաղդադի միջազգային 47-րդ ցուցահանդեսին, 3) ԱՄԷ-ի Դուբայ քաղաքում 2024 թվականի փետրվարին կայանալիք «Gulfood» սննդի և խմիչքի ցուցահանդեսին, 4) ԳԴՀ-ի Դյուսելդորֆ քաղաքում 2024 թվականի մարտին կայանալիք «ProWein 2024» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդեսին, 5) Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում 2024 թվականի մարտին կայանալիք «Foodex Japan 2024» սննդի և խմիչքների միջազգային ցուցահանդեսին, 6) Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում 2024 թվականի հոկտեմբերին կայանալիք «SIAL»		

			սննդի և խմիչքների միջազգային ցուցահանդեսին, 7) Չինաստանի Ցինդաո քաղաքում 2024 թվականի մայիսի կայանալիք «China International Natural Food and Beverage Expo 2024» սննդի, խմիչքների և հումքի միջազգային ցուցահանդեսին: Բացի այդ, իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է եղել արտաքին շուկաներում գովազդելու հայկական արտադրանքը և ձևավորելու հասարակական կարծիք (PR): Միաժամանակ հայտնում եմ, որ 2023 թվականի ընթացքում առաջին անգամ հայկական գինիներ են արտահանվել Բենին, Մալթա, Կուբա և Ավստրիա:		
		3.2 ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում	ԱՄՆ ՄԶԳ-ի «Տնտեսական հիմքեր՝ հանուն դիմակայուն Հայաստանի» ծրագրի աջակցությամբ մշակման փուլում է գտնվում ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի նախագիծը: Էկոնոմիկայի նախարարի մոտ 2023 թվականի նոյեմբերի 6-ին՝ ԱՄՆ ՄԶԳ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած ռազմավարության մշակման մեկնարկային հանդիպման ընթացքում ներկայացվել և համաձայնեցվել են ռազմավարության մշակման հիմնական մոտեցումները, բովանդակությունը, ինչպես նաև ռազմավարության նպատակներն ու հիմնախնդիրները: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ներկայումս մշակման փուլում է գտնվում ռազմավարության վերլուծական զեկույցը, մասնավորապես.	ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից իրականացվել է Հայաստանի Հանրապետության արտահանման այլընտրանքային շուկաների համապարփակ վերլուծություն՝ գնահատելով Հայաստանի արտահանման խոցելիությունը, այլընտրանքային շուկաների ընտրության վրա ազդող գործոնները, լոգիստիկ դժվարությունները, ինչպես նաև որոշ առանձին պարենային ապրանքների համար (գինի, պանիր, ձուկ, լոլիկ, վարունգ, ծիրան, դեղձ և այլ բանջարեղեններ) արտահան-ման շուկաների դիվերսիֆիկա-ցումը և մարտահրավերները:	

			1. Հայաստանի տնտեսական ակնարկը. արտահանման և ներմուծման ցուցանիշները, աշխարհաքաղաքական համատեքստը, առևտրային հարաբերությունների վերլուծությունը, 2. առաջնային և երկրորդային տվյալների հավաքագրման միջոցով հիմնական մարտահրավերների բացահայտումը (ներառյալ խորը հարցազրույցները), 3. արտահանման կատարողականի համապարփակ վերլուծությունը. 1) առաջնային արտահանման ապրանքային խմբերի վերլուծությունը, 2) առաջնային շուկաների ընտրությունը, 3) լոգիստիկայի և ենթակառուցվածքի խնդիրների վերլուծությունը, 4) արտահանման խթանման խնդիրների վերլուծությունը, 5) ազգային արտահանման խթանման կարողությունների համապարփակ վերլուծությունը, 6) արտահանողների կարողությունների վերլուծությունը. ենթակառուցվածքները, շուկայի գիտելիքները, կանոնակարգերը:		
4	Գյուղատնտեսության զարգացում, արտադրողականության բարձրացում և կայուն անասնահամաճ արակային և բուսասանիտարական	4.1 Մշակաբույսերի սորտերի և հիբրիդների զարգացում, կենդանիների ցեղերի բարելավում, արտադրողականության աճ	• **Մշակաբույսերի սորտերի և հիբրիդների զարգացման ուղղությամբ.** - Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի կողմից շարունակվել են դասական սելեկցիայի մեթոդով (ծնողական ձևերում առկա են վայրի ազգակիցներ) աշխատանքները ցորենի, գարու, հաճարի և ցորենաշորայի երաշտադիմացկուն սորտանմուշների ստացման ուղղությամբ: Իրականացվել են մոլեկուլյար սելեկցիայի	Առանձնացվել են ցորենի 14, գարու 7 և ցորենաշորայի 4 նմուշներ (սելեկցիոն գծեր), որոնց դաշտային հետազոտությունները հատկանիշների կայունացման ուղղությամբ շարունակվում են: Գրանցվել և	

	իրավիճակի ապահովում		աշխատանքներ (գենինժեներիայի մեթոդով)՝ միջավայրի անբարենպաստ պայմանների նկատմամբ ցորենի կայուն գծեր ստանալու նպատակով: Շարունակվում են նաև աշխատանքները բարձր ձմեռապահունակ սխտորի, սոխի, ինչպես նաև պռասասոխի բարձր բերքատու սորտերի ստացման ուղղությամբ: - ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2023 թվականին իրականացվել են բանջարաբոստանային մշակաբույսերի թվով 157 սորտերի և հիբրիդների ստացման ուղղությամբ աշխատանքներ: - «Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2023 թվականին իրականացվել են թվով 11 հացահատիկային և թվով 18 հատիկաընդեղեն մշակաբույսերի, ինչպես նաև «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ի կողմից 2023 թվականին թվով շուրջ 13 հացահատիկային և թվով 6 հատիկաընդեղեն մշակաբույսերի նոր սորտերի ստացման ուղղությամբ սելեկցիոն աշխատանքներ: **• Կենդանիների ցեղերի բարելավման և արտադրողականության աճի ուղղությամբ.** - Տոհմային գործի բարելավման նպատակով նախարարության կողմից իրականացվել են 2 պետական օժանդակության ծրագրեր, որոնք միտված են եղել արտերկրից համաշխարհային ճանաչում ունեցող դասական ցեղերի տոհմային կենդանիների ներկրման աջակցությանը:	սորտաշրջանացման է հանձնվել սխտորի և գլուխ սոխի մեկական սորտ: Առանձնացվել են պռասասոխի 3 կայուն գծեր: Իրականացվել են բանջարաբոստանային մշակաբույսերի թվով 157 սորտերի և հիբրիդների ստացման ուղղությամբ աշխատանքներ: 2023 թվականին իրականացվել են թվով 11 հացահատիկային և թվով 18 հատիկաընդեղեն մշակաբույսերի, ինչպես նաև «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ի կողմից 2023 թվականին թվով շուրջ 13 հացահատիկային և թվով 6 հատիկաընդեղեն մշակաբույսերի նոր սորտերի ստացման ուղղությամբ սելեկցիոն աշխատանքներ: Տոհմային տավարաբուծության ծրագրի շրջանակներում 2019-2023 թվականների ընթացքում հանրապետություն է ներկրվել շուրջ 2173 գլուխ հոլշտին, սիմենթալ, շվից, ջերսեյ և անգուս ցեղերի տոհմային երինջներ, որոնցից ստացվել է շուրջ 8100	

				գլուխ բարձրարժեք սերունդ: Դրան զուգահեռ հանրապետությունում արդեն իսկ առկա ավելի քան 9500 գլուխ տոհմային կենդանիներից այդ տարիների ընթացքում ստացվել է ևս շուրջ 45000 սերունդ կամ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետության տավարի ընդհանուր գլխաքանակից (502 հազար) 53 հազարը կամ 10.6%-ը կկազմեն մաքրացեղ տոհմային կենդանիները: Տոհմային ոչխարաբուծության և այծաբուծության ծրագրի շրջանակներում հանրապետություն է ներկրվել շուրջ 1800 գլուխ բարձր պտղատվությամբ և մսային հատկանիշներով օժտված՝ դորփեր, բլանշ, ռոմանովյան և այլ ցեղերի տոհմային ոչխարներ: Եվս 1000 գլուխ բլանշ ցեղի տոհմային ոչխարներ ներկրվել են միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:	
			- Ներկրված կենդանիներից և հանրապետությունում արդեն իսկ առկա տոհմային կենդանիներից արդեն իսկ ստացվել են շուրջ 78000 մաքրացեղ տոհմային կենդանիներ, ինչը կազմում է հանրապետությունում առկա մանր եղջերավոր	Ստացվել են շուրջ 78000 մաքրացեղ տոհմային կենդանիներ:	

			կենդանիների ընդհանուր գլխաքանակի (շուրջ 701 հազար գլուխ) 11.1%-ը: - «Սմարթ Ագրո» ՍՊԸ-ի կողմից հաշվետու տարում հանրապետությունում իրականացվել են շուրջ 12 հազար ԽԵԿ արհեստական սերմնավորման միջոցառումներ, իսկ «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի 11 անասնաբույժ մասնագետների կողմից շուրջ 1400 տնտեսավարողի մոտ իրականացվել է շուրջ 2500 ԽԵԿ արհեստական սերմնավորման միջոցառում: - «Թոթալ» ընկերության կողմից նույն ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 9000 ԽԵԿ արհեստական սերմնավորում: Միաժամանակ տեղեկացվում է, որ շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետությունում կովերի արհեստական սերմնավորման 2024-2028 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է հաշվետու ժամանակաշրջանում սերմնավորել 265 հազ գլուխ ԽԵԿ, տարեկան սերմնավորման թիվը հասցնելով 80 հազարի: - Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոնում իրականացվող հետազոտություններո ուղղած են խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ցեղերի բարելավմանը:	Իրականացվել են շուրջ 12 հազար ԽԵԿ արհեստական սերմնավորման միջոցառումներ: Իրականացվել են շուրջ 9000 ԽԵԿ արհեստական սերմնավորում: Ստեղծվել են տավարի խառնացեղերի սինթետիկ պոպուլյացիաներ, որոնց օրական կաթնատվությունը 15-20 կգ է, դիմացկուն են, լավ են օգտագործում արոտները: Շիրակի մարզի Կրաշեն համայնքի Այծաբուծական տնտեսությունում կաթնային ուղղության Զանենյան ցեղի այծերի լակտացիայի ընթացքում միջին կաթնատվությունը կազմել	

				է 460-470 կգ տեղական այծերի կաթնատվության 120-150 կգ կաթնատվության դիմաց:	
		4.2 Տեղական սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման միջոցառումների իրականացում	1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից արտադրվել է շուրջ 250 կգ բանջարաբոստանային տարբեր մշակաբույսերի սերմեր, «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ի կողմից՝ 452 տոննա հացահատիկային և 7.5 տոննա հատիկաընդեղեն մշակաբույսերի բարձր վերատադրության սերմեր: 2. Տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրման նպատակով «Սերմերի և տնկանյութի մասին» ՀՕ-345-Ն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Տնտեսական արդյունավետության պետական փորձարկումների կազմակերպման, օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի և հիբրիդների ցանկում դրանց գրանցման և գրանցումից հանելու կարգը սահմանելու մասին» N 2089-Ն և «Հայաստանի Հանրապետություն մշակաբույսերի սերմերի և տնկանյութի ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման կարգը սահմանելու մասին» N 2098-Ն որոշումները: Բացի այդ ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից հաստատվել են «Դաշտային հետազոտողների հավատարմագրման կարգը և	ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից արտադրվել է շուրջ 250 կգ բանջարաբոստանային տարբեր մշակաբույսերի սերմեր, «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ի կողմից՝ 452 տոննա հացահատիկային և 7.5 տոննա հատիկաընդեղեն մշակաբույսերի բարձր վերատադրության սերմեր: Ընդունվել են ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2089-Ն և N 2098-Ն որոշումները, բացի այդ ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից հաստատվել են թվով 7 հրամաններ:	

			սերմնադաշտերի ու տնկարանային տարածքների դաշտային հետազոտությունների հայտի ձևը հաստատելու մասին», «Մշակաբույսերի սերմնադաշտերի և տնկարանային տարածքների դաշտային հետազոտությունների հայտի ներկայացման կարգը սահմանելու մասին», «Մշակաբույսերի սերմնաբուծության և տնկարանային արտադրության հերթագայությունը (սխեման) սահմանելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի սեպտեմբերի 29-ի N 164-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» «Բողոքարկման խորհրդի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին», «Պիտակների ձևերը և դրանց միջոցով հաղորդվող տեղեկությունների բովանդակությունը սահմանելու մասին», «Գիտահետազոտական աշխատանքների և սորտափորձարկումների համար Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող մշակաբույսերի սերմերի և տնկանյութի առավելագույն քանակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 5-ի № 238-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու» և «Մշակաբույսերի սերմերի և տնկանյութի խմբաքանակից նմուշառման կարգը և նմուշառման ակտի ձևը սահմանելու մասին» հրամանները: 3. Սերմերի և տնկանյութի հավաստագրման համակարգի բարելավման նպատակով «Գյուղատնտեսական հետազոտությունների և		

			հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ում հիմնվել է կենսաքիմիական լաբորատորիա: 4. Հայաստանի Հանրապետությունում կարտոֆիլի առաջնային սերմնաբուծության զարգացման նպատակով կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի արտադրության համար ՀՀ Արմավիրի մարզում 2000 քմ մակերեսով ջերմատան կառուցման նպատակով հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից ջերմատան կառուցման նախապատրաստական աշխատաքներն ընթացքի մեջ են: Ջերմատան առկայության դեպքում հնարավոր կլինի 1 տարում ստանալ նվազագույնը 150 հազար հատ մինի պալար, որն էլ կապահովի 40 տոննա սուպեր-սուպեր էլիտա պալարներ:	Տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրման նպատակով մշակվել են հրահանգ-ուղեցույցներ, իսկ ազգային ստանդարտների մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են: Աշնանը ստացվել և պահեստա-վորվել են կարտոֆիլի 9 սորտերի ընդհանուր 2 տոննա սուպեր-սուպեր էլիտա պալար-ներ, որոնց երկրորդ վեգետա-ցիան կշարունակվի 2024 թվականին՝ էլիտա պալարներ ստանալու նպատակով:	
		4.3 Գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոպարենային ոլորտի սարքավորումների արդիականացում	ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողներին: Ծրագիրն իրականացվում է 2017 թվականից և նախատեսվում է իրականացնել նաև միջնաժամկետ ժամանակահատվածում:	Հայաստանի Հանրապետու-թյունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակ-ցության ծրագրի շրջանակում 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ 434 լիզինգային հայտի շրջանակում տրամա-դրվել է 664 միավոր գյուղա-տնտեսական տեխնիկա, այդ թվում 193 միավոր տրակտոր, 5 միավոր կոմբայն և 466 միավոր այլ գյուղատնտեսական տեխ-նիկա: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 2.9 մլրդ դրամ:	

			ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի սարքավորումների տրամադրումը տնտեսավարողներին: Ծրագիրն իրականացվում է 2018 թվականից և նախատեսվում է իրականացնել նաև միջնաժամկետ ժամանակահատվածում:	Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է 111 շահառուի 128 լիզինգի հայտ 5024.5 մլն դրամի չափով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 435 միավոր սարքավորում, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 2004.8 մլն դրամ: Ընդհանուր առմամբ ծրագրի մեկնարկից սկսած մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը հաստատվել է 726 շահառուի 1038 լիզինգի հայտ շուրջ 41.0 մլրդ դրամի չափով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 2671 միավոր սարքավորում, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 6.1 մլրդ դրամ:	
		4.4 Անասնաբուծության և թռչնաբուծության զարգացման միջոցառումների իրականացում	2022 թվականի նոյեմբերից ներդրվել և գործարկվել է «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագիրը:	Ծրագրի շրջանակներում իրականացվել է շուրջ 573201 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում: 2023 թվականին ծրագրի իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք է բերվել 493000 հատ ականջապիտակ և հանձնվել է «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ	

				առևտրային կազմակերպությանը՝ միջոցառումն իրականացնող անասնաբույժներին բաշխելու նպատակով:	
			Պարենային անվտանգության և անասնաբուծական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացման, անասնաբուծության ճյուղում ներդրումների ավելացման, տեղական արտադրության խթանման, ճյուղի գրավչության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը:	Ծրագրի շրջանակում 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կնքվել է շուրջ 32.09 մլրդ դրամի 6 պայմանագիր հետևյալ ուղղություններով. թռչնաբուծություն, խոզաբուծություն և տավարաբուծություն:	
			2023 թվականին իրականացվել են շարունակական խորհրդատվական աշխատանքներ:	ՀՀ ՍԱՏՄ Անասնաբուժության վարչության կողմից տնտեսավարողներին տրամադրվել է խորհրդատվություն անասնաբուծական համալիրների՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտներին ներկայացվող միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջների վերաբերյալ:	
		4.5 Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրի իրականացում	2023 թվականի ընթացքում բույսերի հիվանդությունների, վնասատուների, մորեխների և մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքների 184940 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացվել են	Հայաստանի Հանրապետության մարզերին անհատույց տրամադրվել են «Բրոմոցիդ-Ֆլյուիդ» տեսակի մկնասպան և «Տրիումֆ» տեսակի միջատասպան թունանյութեր, մասնավորապես, 2600 հա-ի վրա՝	

			մշտադիտարկման աշխատանքներ, որի արդյունքների հիման վրա միջին և ուժեղ վարակվածություն ունեցող շուրջ 83000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացվել են մկնանման կրծողների, մորեխների, ծղրիդների, հունիսյան բզեզի և օկնոգինա թրթուրների դեմ պայքարի աշխատանքներ: Մասնավորապես Իրականացված միջոցառումների արդյունքում 80-90 %-ով կրճատվել է վնասակար օրգանիզմների տարածման արեալները և վերջիններիս կողմից գյուղատնտեսական մշակաբույսերին հասցվող վնասի չափը:	օկնոգինա, բզեզ և ծղրիդ վնասատուների դեմ՝ 855լ թունանյութի կիրառմամբ: Հարկ է նշել, որ ՀՀ Արագածոտնի մարզի և Կոտայքի մարզի առավել վարակված 1350 հա-ի վրա պայքարի աշխատանքներն իրականացվել են ավիացիոն եղանակով: Մկնանման կրծողների դեմ պայքարն իրականացվել է շուրջ 80000 հեկտար առավել վարակված գյուղատնտեսական հողատեսքերում՝ մոտ 6400 լ թունանյութի կիրառմամբ:	
		4.6 Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի իրականացում	Հայաստանի Հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ագրոքիմիական հետազոտությունների իրականացման նպատակով վերցվել են հողանմուշներ, մակրո և միկրոտարրերի քանակները որոշելու նպատակով հողում կատարվել են լաբորատոր փորձաքննություններ, որոնց արդյունքների հիման վրա կազմվել և ՀՀ մարզերի համայնքներին են հանձնվել գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոքիմիական քարտեզներ՝ իրենց հրահանգներով:	Հայաստանի Հանրապետության մարզերում 46349 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ագրոքիմիական հետազոտությունների իրականացման նպատակով վերցվել են 15449 հատ հողանմուշներ, մակրո և միկրոտարրերի քանակները որոշելու նպատակով հողում կատարվել են լաբորատոր փորձաքննություններ, որոնց արդյունքների հիման վրա կազմվել և ՀՀ մարզերի 85 համայնքներին են հանձնվել գյուղատնտեսական նշանակության հողերի թվով 85 ագրոքիմիական քարտեզներ՝ իրենց հրահանգներով:	

		4.7 Մատուցվող անասնաբուժական ծառայությունների ընդլայնում, բարելավում և մարզային լաբորատորիաների վերազինում	ՀՀ կառավարության 2023 թվականի հունվարի 5-ի N 25-Լ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների ծրագիրը, որի նպատակն է լաբորատոր ախտորոշման և փորձաքննության միջոցով կանխարգելել կենդանիների, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների դեպքերը, կառավարել հնարավոր վարակիչ հիվանդությունների ներթափանցման ռիսկերը, պաշտպանել բնակչությանը կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից: Միջազգային կառույցների հետ համագործակցության արդյունքում համաճարակաբանները վերազինվել են համակարգչային տեխնիկայով, ինչպես նաև լաբորատոր մասնագետների, համաճարակաբանների, անասնաբույժների շրջանում իրականացվել են համաճարակաբանական վերլուծության, լաբորատոր գործունեության, համարակալման, «ԱՆԻ ՊԱԱ» էլեկտրոնային համակարգում տվյալների մուտքագրման գործընթացների վերապատրաստման դասընթացներ: Բնակչության շրջանում կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելման նպատակով Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ընթացել են՝		

			1. «Կենդանիների վակցինատոր» մասնագիտական ուսուցման ծրագիրը, 2. «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի դասընթացը:	Վերապատրաստման դասընթացը շարունակական է, դասընթացին ընդհանուր առմամբ մասնակցել են 109 դիմորդ: Շարունակական դասընթացին մասնակցել է շուրջ 234 շահառու:	
		4.8 Հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողական ու արդյունավետ օգտագործում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 1605-Լ որոշմամբ հաստատվել է հողային բարեփոխումների փորձնական ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ծրագիրը իրականացվելու է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը: Մշակվել է ծրագրում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը ներկայացվելու է շահագրգիռ մարմիններ կարծիքի:	Հողային բարեփոխումների փորձնական ծրագրի շրջանակում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան, Նորակերտ և Խոյ համայնքի Հայթաղ բնակավայրերում իրականացվել է վարելահողերի և բազմամյա տնկարկների իրավական խնդիրների ամբողջական գույքագրում, իսկ Արմավիր համայնքի Մայիսյան բնակավայրում իրականացվել են չմշակվող հողերի գույքագրման աշխատանքներ: Հայթաղ բնակավայրում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռք է բերվել 11.4 հա ընդհանուր մակերեսով 39 հողակտոր: Միաժամանակ հայտնում եմ, որ՝ 1. «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական	

				նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների» ծրագրի շրջանակում կնքվել է 1 պայմանագիր՝ 10-30 հա մակերեսով հողատարածքների միավորման համար: 2. «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների» ծրագրի շրջանակներում փոխհատուցման բաղադրիչով կնքվել է 105 պայմանագիր, 559.4 հա ընդանուր մակերեսով հողատարածքներում ոռոգման արդիական համակարգերի ներդման նպատակով, տրամադրվել է 28 փոխհատուցում՝ 121.4 մլն դրամի չափով, 111.6 հա ընդանուր մակերեսով հողատարածքներում ոռոգման արդիական համակարգերի ներդման նպատակով, վարկային բաղադրիչով կնքվել է 15 վարկային պայմանագիր՝ 148.556 հա ընդանուր մակերեսով հողատարածքներում ոռոգման արդիական համակարգերի ներդման նպատակով:	

		4.9 Գյուղական համայնքների դպրոցներում գյուղատնտեսության վարման տեսական և գործնական կրթական ծրագրերի փորձնական ներդրում, դպրոցական այգիների և ջերմոցների հիմնում	Հանրակրթական ուսումնական 51 հաստատություններում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ ստեղծվել և գործարկվել են դպրոցահենք ջերմատներ, ինտենսիվ այգիներ և հատապտղանոցներ, հիմնարկի գյուղատնտեսների ու մանկավարժ-մեթոդիստի կողմից պարբերաբար իրականացվում են խմբակավարների վերապատրաստումներ:	ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ, Մարտունու թիվ 2 հիմնական, Սևանի թիվ 1 հիմնական, Մեծ Մասրիկի միջնակարգ, Գեղար-քունիք գյուղի միջնակարգ և Ծաղկունքի բաց դպրոց հիմնադրամ հաստատությունների գործարկվել են ինտենսիվ այգիներ և ջերմատուն:	
5	Ապրանքների ներմուծման ռիսկերի կանխատեսում և պաշարների վաղաժամ կուտակում: Ներմուծվող ապրանքների մատակարարում ների խափանումների ռիսկերի նվազեցում	5.1 Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների իրականացում, ներառյալ ներմուծվող ապրանքների լոգիստիկ խափանումներով պայմանավորված անբավարարության վաղաժամ կանխատեսում և կանխարգելում	Նկատի ունենալով ներմուծվող հիմնական պարենամթերքի ներմուծման մեծ կախվածությունը ՌԴ-ից՝ ներմուծման շուկաները դիվերսիֆիկացնելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից գնահատվել են ցորենի, եգիպտացորենի և բուսական յուղի այլ երկրներից ներմուծման դեպքում դրանց արժեքի հնարավոր շեղումները Ռուսաստանի Դաշնությունից ներմուծվողի նկատմամբ: Բացի այդ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ԱՄՆ-ի Կանզաս համալսարանի փորձագետների հետ համատեղ իրականացվել է Հայաստանի և ցորեն արտահանող մի շարք երկրների ցորենի շուկաների վերլուծություն և ներմուծման լոգիստիկ ծախսերի գնահատում: Նյութական պահուստում ընդգրկված ապրանքների տեսականու և ծավալների ընդլայնման, ձևավորման և օրենսդրական դաշտի կարգավորման նպատակով ՆԳՆ համակարգմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ:		

6	Ռազմավարական գործընկեր երկրների հետ ինստիտուցիոնալ և անխափան կապերի հաստատում և ամրապնդում, արտաքին և ներքին մարտահրավերներին դիմակայելու պատրաստ համալրված նյութական պահուստի ձևավորում	6.1 Մասնակցություն ռազմավարական գործընկեր երկրների նյութական պահուստների կառավարումն իրականացնող գործադիր մարմինների միջև տարբեր ձևաչափերով ընթացող ինտեգրացիոն գործընթացներին	ՆԳՆ Պետական ռեզերվների գրասենյակը հանդիսանում է ԱՊՀ երկրների մասնակից պետությունների նյութական պահուստի կառավարում իրականացնող պետական(գործադիր) իշխանության մարմինների ղեկավարների Կոնսուլտատիվ խորհրդի անդամ: ՆԳՆ ՊՌԳ-ի մասնակցությամբ վերջին խարհրդակցությունը տեղի է ունեցել 2023 թվականի մայիսի 15-ին «Նյութական պահուստի ստեղծման տեսլական»-ի վերաբերյալ՝ տեսակոնֆերանսի ձևաչափով: Սույն թվականի օգոստոսի 8-ին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայացել է ԱՊՀ երկրների մասնակից պետությունների նյութական պահուստի կառավարում իրականացնող պետական (գործադիր) իշխանության մարմինների ղեկավարների Կոնսուլտատիվ խորհրդի XIX-րդ նիստը, որին կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված Պետական ռեզերվների գրասենյակը չի մասնակցել:		
		6.2 Նյութական պահուստում ներառված նյութական արժեքների անվանացանկերի վերանայում՝ բուսական յուղի, շաքարի և եգիպտացորենի (որպես անասնակեր) պարտադիր ներառմամբ:	ՀՀ վարչապետի հանձնարարականի պահանջով ՀՀ նյութական պահուստների նոր համակարգի հայեցակարգի մշակման աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ), որի շրջանակներում քննարկվում է նյութական պահուստի ձևավորման նոր մոդելը, ինչպես նաև վերանայվում են և մշակվում ՀՀ-ում հնարավոր ճգնաժամային իրավիճակների սցենարները և յուրաքանչյուրի կառավարման համար		

			անհրաժեշտ նյութական արժեքների ապրանքացանկերը (բուսական յուղի, շաքարի և եգիպտացորենի՝ որպես անասնակեր, պարտադիր ներառման անհրաժեշտությունը):		
7	Պատրաստի սննդի կորուստների կրճատում	7.1 Ճիշտ և առողջ սնուցման, ինչպես նաև պատրաստի սննդի կորուստների իրազեկման արշավների իրականացում	«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» ծրագրի շրջանակներում իրականացվել են «Սննդի առողջապահական նշանակության» դասընթացներ: Դասընթացների թեմաներում ընդգրկվել են նաև ճիշտ և առողջ սնուցմանը վերաբերող հարցեր: Միաժամանակ հայտնում եմ, որ պատրաստի սննդի կորուստների գնահատման և կրճատման իրազեկման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու նպատակով աշխատանքներ են տարվում միջազգային դոնոր կազմակերպություններ ներգրավելու ուղղությամբ:	«Սննդի առողջապահական նշանակության» դասընթացներին մասնակցել են ՀՀ մարզերի 163 ուսուցիչ և 1095 ծնող:	
		7.2 Դպրոցական սնունդ ծրագրի կրթական ենթաբաղադրիչում պատրաստի սննդի կորուստների կրճատման թեմայի ընդգրկում	Կրթական ենթաբաղադրիչում ներառելու նպատակով աշխատանքներ են տարվում պատրաստի սննդի կորուստների կրճատման թեմայի մշակման համար՝ փորձագետների ներգրավման միջոցով:		
2. Պարենի մատչելիություն					
8	Սննդամթերքի գնաճի ցածր և կայուն մակարդակի ապահովում	8.1 Գնաճի ցածր և կայուն մակարդակի ապահովում	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գների կայունության նպատակի ապահովումը (ինչը և ենթադրում է նաև սպառողական զամբյուղի առանձին տարրերի, այդ թվում սննդամթերքի գների կայունություն միջնաժամկետ և	2023 թվականի նոյեմբերին ՀՀ-ում 12-ամսյա գնաճը կազմել է 0.5%, իսկ պարենային ապրանքների 12-ամսյա գնաճը՝ -3.1%	

			երկարաժամկետ հատվածում) բխում է «Կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքից» և ՀՀ Սահմանադրությունից: Կենտրոնական բանկը մշակում և իրականացնում է դրամավարկային քաղաքականություն՝ ուղղված երկրում գների կայունության նպատակի իրագործմանը: Վերոնշյալ նպատակի իրագործման շրջանակներում, այդ թվում հանրային հաշվետվողականության ապահովման համատեքստում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը եռամսյակային պարբերականությամբ պատրաստում և հրապարակում է գնաճի հաշվետվություններ (2023 թվականի չորրորդ եռամսյակի գնաճի հաշվետվությունը հաստատվել է ա.թ. դեկտեմբերի 26-ի թիվ 226-Ա որոշմամբ): Նշված փաստաթուղթը պարունակում է Ռազմավարության համապատասխան նպատակի իրագործման մասով անհրաժեշտ տեղեկատվություն:		

10	Բնակչության սոցիալական ապահովվածության և սոցիալապես խոցելի խմբերի հուսալի պաշտպանվածության ապահովումը	10.3 Սոցիալական առաջնային կարիքների բավարարմանն ուղղված ոչ ֆինանսական ծառայությունների տրամադրում,	1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 5-ի N 71-Ա/1 հրամանով Հայաստանի Հանրապետությունում գործարկվել է «Սոցիալական շտապ օգնություն» դրամաշնորհային ծրագիրը: Դրամաշնորհը տրամադրվում է կազմակերպությանը, որը պետք է համագործակցի նախարարության պատասխանատու ստորաբաժանման, Միասնական սոցիալական ծառայության և դրա տարածքային կենտրոնների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ, հավաքագրի անհրաժեշտ ապրանքատեսակների (բնաիրային), պահեստավորի այն և կազմակերպի դրանց բաշխումը սոցիալապես անապահով, դրա կարիքն ունեցող ընտանիքներին. 2023 թվականի դրամաշնորհի հատկացման մրցույթը հաղթել է «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամը: Ծրագրի իրականացման արդյունքում, գնահատված կարիքների հիման վրա, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) տրամադրվել է բնաիրային օգնություն: Կարիքները գնահատվում են նախօրոք մշակված պարենային անապահովության հարցաշարի միջոցով: Փաթեթների պարունակությունը, չափաքանակը և արժեքը նախապես համաձայնեցնվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատու ստորաբաժանման հետ և բաշխվում են ըստ ընտանիքի անդամների թվի, կազմի և գնահատված կարիքի:	2023 թվականին ծրագրի իրականացման ընթացքում թվով 900 շահառուի տրամադրվել է բնաիրային փաթեթ:	

			Նախատեսվում է ծրագրի աշխարհագրությունը հետագայում ընդլայնել: 2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգմամբ իրականացվել է «Սննդի քարտեր պարենային անապահով ընտանիքների համար» ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ 3 մարզերում (Շիրակ, Տավուշ, Լոռի), 24 դոլար մեկ անձի հաշվարկով՝ 3 ամսով: Ծրագիրն իրականացվել է «Առաքելություն Հայաստան» և «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպությունների միջոցով:	Ավելի քան 900 տնային տնտեսության տրամադրվել են սննդային քարտեր՝ կարիքների գնահատման հիման վրա:	
		10.4 Սոցիալական խնդիրների լուծման նոր ձևաչափի գործարկում՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը:	Սոցիալական խնդիրների լուծման նոր ձևաչափի գործարկումը՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը, նախատեսվում է իրականացնել Անապահովության գնահատման նոր համակարգը ներդնելու միջոցով, որը նախատեսվում է 2023 թվականի մարտի 1-ից: Այս համատեքստում, իրականացվել է գնահատման նոր համակարգի փորձարկում՝ առկա խնդիրներն ու թերությունները վեր հանելու նպատակով: Միաժամանակ, սույն թվականի նոյեմբերի 8-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Սոցիալական աջակցության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որը քննարկվել է սոցիալական նախարարական կոմիտեի 27.11.2023 թվականին կայացած նիստում: Համաձայն նիստի N ԿԱ/352-2023	Գնահատման նոր համակարգի հասցեականության փորձարկման հետազոտության իրականացման համար ընտրանքային տարբերակով ընտրվել է 5000 տնային տնտեսություն, իրականացված հետազոտության նպատակն է վեր հանել առկա խնդիրները՝ գնահատման նոր համակարգի սահուն ներդնման համար:	

			արձանագրության 3-րդ կետի՝ որոշվել է հարցը հանել օրակարգից՝ առաջարկելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) ևս մեկ անգամ քննարկել և լրամշակել նախագիծը կոմիտեում հնչեցված դիտարկումներին համապատասխան, կազմակերպել քննարկում փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի գլխավորությամբ և հաջորդ անգամ սոցիալական նախարարական կոմիտեի նիստում հարցը քննարկել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Երևանի քաղաքապետարանի և ֆինանսների նախարարության համապատասխան ներկայացուցիչների մասնակցությամբ: «Պետական նպաստների մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել սույն թվականի նոյեմբերի 10-ին, որը քննարկվել է սոցիալական նախարարական կոմիտեի 04.12.2023 թվականին կայացած նիստում: Համաձայն նիստի N ԿԱ/359-2023 արձանագրության 4-րդ կետի՝ որոշվել է հարցը հանել օրակարգից՝ նախագիծը շահագրգիռ կողմերի և վարչապետի աշխատակազմի հետ քննարկելու և, ըստ անհրաժեշտության, լրամշակելու նպատակով: Վերը նշված օրենքների ընդունումից հետո ՀՀ վարչապետի աշխատակազմ կներկայացվի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի		

			կիրարկումն ապահովելու մասին N 145-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ամբողջությամբ նոր խմբագրությամբ, որով էլ կձևավորվի անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման իրավական հենքը:		
3. Պարենի օգտագործում					
11	Բնակչությանը լիարժեք և առողջապահական նորմերին համապատասխանող սննդով ապահովում: Սննդամթերքի որակի և անվտանգության մակարդակի բարելավում:	11.2 Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում	Առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի օգտագործման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով. -Կազմակերպվել են ասուլիսներ, տարածվել են հաղորդագրություններ, ինչպես Առողջապահության նախարարության պաշտոնական YouTub-յան ալիքով տարածվել են առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված տեսահոլովակներ: - Առողջապահության նախարարության պատվերով պատրաստվել են պաստառներ, թռուցիկներ, ինքնակպչուն թաղանթներ, որոնք փակցվել են մետրոպոլիտենի բոլոր վագոններում, Երևան քաղաքի և մարզերի ավտոբուսներում: - Աղի չարաշահման վնասակարության վերաբերյալ բնակչության իրազեկման և աղի օգտագործման նվազեցման նպատակով մշակվել է և տպագրվել է «Խնայեք աղ, խնայեք առողջություն» վերնագրով իրազեկման բրոշյուրներ՝ ԱԱՊ հաստատություններում	Առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի օգտագործման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով. Կազմակերպվել է 2 ասուլիս, տարածվել են 23 հաղորդագրություններ, 11 ինֆոգրաֆիկաներ, 2 տեսահոլովակ, ինչպես Առողջապահության նախարարության պաշտոնական YouTub-յան ալիքով տարածվել են հետևյալ տեսահոլովակները. 1 հատ՝ ֆիզիկական ակտիվության, 7 հատ՝ ճարպակալման, 3 հատ՝ դիաբետի կանխարգելման և 2 հատ՝ ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության վերաբերյալ: Պատրաստվել են «Առողջ ապրելակերպի թեմայով» 7 պաստառներ, 7000 թռուցիկ՝ 9	

			այցելուներին տրամադրելու նպատակով: Բրոշյուրները տրամադրվել են Երևանի քաղաքապետարանին և մարզպետարաններին: Առողջ սովորությունների ձևավորմանը նպաստելու, առողջ կենսաձևի կայուն գաղափարական ասոցիացիաներ ստեղծելու, ընտանիքները առողջ ապրելակերպի գաղափարի շուրջ միավորելու նպատակով 2023 թվականի մայիս ամսվա ընթացքում Կապան, Եղեգնաձոր, Իջևան, Գյումրի, Դիլիջան քաղաքներում ընտանեկան ձևաչափով իրականացվել են առողջ կենսաձևի քարոզչության արշավներ՝ յուրաքանչյուր քաղաքում 300-ից ավել մասնակիցների, մարզպետարանների, քաղաքապետարանների, բժշկական միավորումների ներկայացուցիչների ներգրավմամբ: «Առողջ և ակտիվ ծերացման» գաղափարը խթանելու, «Ծերացման նոր հասարակական մոդել» ստեղծելու, մեծահասակ բնակչությանն առողջ ապրելակերպի մասին իրազեկելու, ֆիզիկական ակտիվությունը խրախուսելու, առողջ սնվելու գաղափարը քարոզելու նպատակով Երևան քաղաքում իրականացվել է «Առողջ ծերացման» արշավ՝ 300-ից ավել մասնակիցների, ներառյալ Երևանի քաղաքապետարանի, բժշկական միավորում-ների ներկայացուցիչների ներգրավմամբ:	թեմայի վերաբերյալ, 1000 ինքնակպչուն թաղանթներ՝ (փակցվել են մետրոպոլիտենի բոլոր վագոններում, Երևան քաղաքի և մարզերի ավտոբուսներում): Աղի չարաշահման վնասակարության վերաբերյալ բնակչության իրազեկման և աղի օգտագործման նվազեցման նպատակով մշակվել է և տպագրվել է «Խնայեք աղ, խնայեք առողջություն» վերնագրով իրազեկման թվով 5000 բրոշյուրներ՝ ԱԱՊ հաստատություններում այցելուներին տրամադրելու նպատակով: 2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում Երևան քաղաքի 48 համայնքներում կազմակերպել է իրազեկման արշավ՝ «Ակտիվ և առողջ ապրելակերպ՝ ավագ սերնդի համար»: Արշավին մասնակցել են ավագ սերնդի ներկայացուցիչներ, որոնց համար կազմակերպվել են բժշկական զննումներ, առողջ	

				հյուրասիրություն, մասնագետների խորհրդատվություն և ֆիզիկական ակտիվության վարժանքներ:	
		11.3 Կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգի իրականացում	Առողջապահության նախարարության կողմից իրականացվում է կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգ: 2023 թվականի ընթացքում պարբերաբար իրականացվել է կերակրի աղում յոդի պարունակության վերաբերյալ պետական վերահսկողություն:	Կերակրի աղի նմուշների հետազոտությունների արդյունքում արձանագրված շեղումների մասին տեղեկատվություն է ներկայացվում Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար: Իրականացվել է 190 լաբորատոր փորձարկում և հայտնաբերվել 33 անհամապատասխանություն:	
		11.4 Դպրոցներում սննդի և սնուցման հետ կապված միջոցառումների իրականացում	ՀՀ մարզերում գործող հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին և նախակրթարանների երեխաներին տրվում է սնունդ ստանալու հնարավորություն:	Հանրապետության 10 մարզերում գործող 1070 հանրակրթական դպրոցներից շուրջ 1060 դպրոցների տարրական դասարանների աշակերտները և նախակրթարանների երեխաներն ապահովված են սնունդ ստանալու հնարավորությամբ: 796 դպրոցի աշակերտներ ստանում են տաք սնունդ:	
		11.5 Սննդամթերքում միկրոտարրերի (ֆոլաթթու և երկաթ) պարունակության գնահատում	ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ քննարկումների և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կողմից քննարկումների արդյունքում՝ «ՀՀ-ում միկրոսննդանյութերի ընդունման գնահատում և հանրային	«ՀՀ-ում միկրոսննդանյութերի ընդունման գնահատում և հանրային իրազեկման համար անհրաժեշտ գիտամեթոդական ապահովում» գիտական թեմայի հայտը ներկայացվել է ՀՀ	

			իրազեկման համար անհրաժեշտ գիտամեթոդական ապահովում» գիտական թեմայի նպատակային հայտի մշակում ծրագիրը ներկայացվել է ֆինանսավորման ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե:	ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե՝ գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրի նպատակային-ծրագրային ֆինանսավորման համար:	
12	Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական և բուսասանիտարական անվտանգության համակարգերի պատշաճ մակարդակի ապահովում	12.1 «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում և հաստատում	2023 թվականի հունվարի 17-ին ընդունվել է «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» ՀՕ-11-Ն օրենքը, որի կիրարկումն ապահովելու նպատակով հաստատվել են. 1. ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Մեկուսացված համակարգում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության և անվտանգության ապահովման կարգը սահմանելու մասին» № 1541-Ն որոշումը, 2. ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի «Գիտահետազոտական, փորձացուցադրական աշխատանքների ներմուծման, արտահանման և ոչնչացման կարգը սահմանելու մասին» № 1545-Ն որոշումը, 3. ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Լաբորատոր փորձաքննության ենթակա բույսերի տեսակների ցանկը հաստատելու մասին» № 1571-Ն որոշումը, 4. ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության և կենսաանվտանգության հետևանքով շրջակա միջավայրին, մարդու կյանքին և առողջությանը, գյուղատնտեսական նշանակության հողերին սպառնացող վտանգների կանխման և հասցված վնասների	2023 թվականի հունվարի 17-ին ընդունված «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» ՀՕ-11-Ն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով հաստատվել են ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի № 1541-Ն, 1558-Ն և 1571-Ն, նոյեմբերի 9-ի № 1545-Ն ՀՀ կառավարության որոշումները և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի օգոստոսի 30-ի N 161-Լ և դեկտեմբերի 4-ի N 2439-Ն հրամանները:	

			վերացմանն ուղղված միջոցառումների պետական ծրագիրը հաստատելու մասին» № 1558-Ն որոշումը: 5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հարցերով փորձագիտական խմբի ձևավորման կարգը, իրավասությունները, պարտականությունները սահմանելու մասին» N 2439-Ն հրամանը, 6. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի օգոստոսի 30-ի «Մեկուսացված համակարգում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածման յուրաքանչյուր գործընթացի մշտադիտարկման չափանիշներն ու կարգը, մշտադիտարկման մեթոդներն ու ուղեցույցները» N 161-Լ հրամանը:		
		12.2 Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) սննդի անվտանգության համակարգի կամ ISO 22000 ստանդարտի ներդնման աջակցության ծրագրի մշակում	Ուսումնասիրվել է սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի (HACCP) և ISO 22000 ստանդարտի ներդրման գործընթացի հետ կապված առկա խնդիրները և միջազգային փորձը: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2023 թվականի հոկտեմբերի 27-ին կայացած Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ՝ Գագիկ Մակարյանի և Գերմանիայից ժամանած փորձագետ՝ Մարտին Հարթմանի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են կազմակերպություններում վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի սկզբունքների և ISO 22000 ստանդարտի		

			ներդրման առանձնահատկություններն ու մեխանիզմները՝ սննդամթերքի անվտանգության ապահովման վերոնշյալ համակարգերի ներդրման աջակցության ծրագիր մշակելու նպատակով: Միաժամանակ հայտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող 2023-2028 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2023 թվականի մարտի 23-ի N 356-Լ Կառավարության որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 5.1-ին կետով սահմանված «ՎՎՀԿԿ սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման թույլտվության կամ մերժման ընթացակարգի ընդունում» միջոցառման կատարումն ապահովելու նպատակով, մշակվել և շրջանառության փուլում է գտնվում «Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների հիման վրա համակարգի ներդրման թույլտվության կամ մերժման ընթացակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով սահմանվել են վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի և հաստատված պլանի հիման վրա եզրակացության տրման հետ կապված հարաբերությունները:		
4. Պարենի ապահովվածության համակարգի կայունություն					
13	Տնտեսավարող սուբյեկտների անխափան	13.1 Ապահովագրական ամբողջական	ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշմամբ	2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ, գյուղատնտեսական	

	գործունեության ապահովում	համակարգի ներդրման նպատակով հանրապետության 10 մարզերում գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության պիլոտային ծրագրի իրականացում	իրականացվում է Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիրը, որի շրջանակում իրականացվում է ապահովագրավճարի առնվազն 50-60 %-ի սուբսիդավորում: Ծրագրի շրջանակում 2023 թվականին ապահովագրվել են ծիրան, խաղող, դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ, աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ մշակաբույսերը: Ապահովագրվող ռիսկերն են՝ գարնանային ցրտահարությունը, երաշտը, կարկուտը և հրդեհը:	տարվա համար Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալության կողմից տրամադրված տվյալների համաձայն, ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 10192 ապահովագրական պայմանագիր, համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 1.8 մլրդ դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է 11662 հա: Տրվել է 3856 հատ ապահովագրական հատուցում՝ շուրջ 2.6 մլրդ դրամի չափով:	
14	Պարենապահովման և սննդամթերքի բաշխման համակարգի մշակում, ներդրում և դրանց անխափան ու արդյունավետ աշխատանքի ապահովում արտակարգ իրավիճակների պայմաններում	14.1 Արտակարգ իրավիճակների ժամանակ պարենային արագ արձագանքման և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրում	ՀՀ վարչապետի հանձնարարականի պահանջով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի շրջանակներում քննարկվում է նյութական պահուստի ձևավորման նոր մոդելը, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ժամանակ պարենային արագ արձագանքման և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրման հարցը: Աշխատանքային խմբի շրջանակներում նաև մշակվում են մասնավոր հատվածի ներգրավման հստակ մեխանիզմներ՝ շեշտադրելով ազատ շրջանառության մեջ առկա ապրանքացանկերի ձեռքբերումն ու պահպանումը մասնավոր հատվածի կողմից:	ՀՀ վարչապետի հանձնարարականի պահանջով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ:	
15	Զարգացած լոգիստիկ	15.1 Սպասարկման ժամանակակից	ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի Ներդրումային խորհրդի կողմից,	Բացի այդ ներկայացվում է ՀՀ մարզպետարաններից 2023	

	ենթակառուցվածքներ և ագրոպարենայի ն արտադրանքի իրացման աջակցության ծառայություններ ի մատուցում	ենթակառուցվածքներ, մատուցվող բարձրորակ ծառայություններ	ՎԶԵԲ-ի և Միացյալ Թագավորության կառավարության աջակցությամբ մշակվում է գյուղմթերքի մթերման և բաշխման կենտրոնների ստեղծման ծրագիրը: Քննարկման արդյունքում որոշվել է, որ Հայաստանի ներդրումային խորհրդի կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կներկայացվի գյուղմթերքի մթերման և բաշխման կենտրոնների ձևավորմանը նպաստող ռազմավարական մոտեցումների փաթեթ, համապատասխան առաջարկներով, որից հետո կմշակվի գյուղմթերքի մթերման և բաշխման կենտրոնների ստեղծման գործողությունների պլանը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում է տարբեր դոնոր կառույցների կողմից իրականացված կամ իրականացվող ծրագրերը, որոնք նպատակ են ունեցել ՀՀ մարզերում ձևավորել համապատասխան ենթակառուցվածքներ կամ առաջարկել են նմանատիպ կառույցների ստեղծում: Միաժամանակ ուսումնասիրվում է նաև միջազգային փորձը՝ օգտագործելով ինչպես գրասենյակային վերլուծության մեթոդը (ներառյալ համապատասխան գրականության հայտնաբերում և ուսումնասիրություն) այնպես էլ տարբեր կառույցների և փորձագետների հետ խորը հարցազրույցի մեթոդաբանությունը, ինչպես նաև այլ երկրների նմանատիպ կառույցների հետ զրույցները: Ուսումնասիրվել են լոգիստիկ կենտրոնների տարբեր մոդելներ, կառավարման մոտեցումները, լոգիստիկ կենտրոնների ձևավորմանն ուղղված տարբեր երկրների պետական քաղաքականությունը և իրականացրած քայլերը:	թվականի ընթացքում միջազգային կառույցների աջակցությամբ կամ մասնավոր ներդրումներով ստեղծված, գործարկված, կառուցման փուլում գտնվող և առաջիկայում պլանավորված սառնարանային պահեստավորման ու փաթեթա-վորման ենթակառուցվածքների և լոգիստիկ կենտրոնների վերաբերյալ ստացված տեղե-կատվությունը. 1)ՀՀ Արագածոտնի մարզ – Թալին համայնքում կառուցման փուլում են գտնվում «Վիար Արմենիա» ՍՊԸ-ի կողմից 9800 խորանարդ/մետր ծավալով և Գագիկ Վարդանյան ԱՁ-ի 200 խորանարդ/մետր ծավալով մրգի պահպանության սառնարանա-յին պահեստները: 2) ՀՀ Արմավիրի մարզ - Վաղարշապատ համայնքում 2 տնտեսվարողների կողմից իրականացվում է սառնարան-ների կառուցում ընդհանուր 130 տոննա հզորությամբ և ևս 2 տնտեսվարողի կողմից սառնարանային տնտեսություն-ների կառուցումը գտնվում է նախապատրաստական փուլում: Բաղրամյան համայնքում կառուցման փուլում է 1 սառնարան՝ 1200 խորա-նարդ/մետր ծավալով, իսկ 13	

			Միաժամանակ Հայաստանում գյուղատնտեսական ապրանքների լոգիստիկ կենտրոնների ձևավորման ռազմավարական փաստաթղթի մշակման աշխատանքների իրականացման նպատակով մանրամասն ուսումնասիրվել է հասանելի վիճակագրությունը, հավաքագրվել և Հայաստանի ներդրումային խորհրդին է ներկայացվել ՀՀ մարզերի որոշ բնակավայրերից 2021-2022 թվականների ընթացքում հավաքված հինգ (5) հիմնական պտղի և բանջարեղենի ծավալների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը՝ լոգիստիկ կենտրոնների նախնական տեղակայման վայրերը գնահատելու, ինչպես նաև մատակարարվելիք համապատասխան թարմ գյուղատնտեսական արտադրանքի ծավալները հասկանալու նպատակով:	սառնարանի կառուցումը՝ 9580 խորանարդ/մետր ընդհանուր ծավալով գտնվում է նախագծման փուլում: 3) ՀՀ Սյունիքի մարզ - Գորիս համայնքում առկա է գործարկված գյուղատնտեսա-կան մթերքների վերամշակման և փաթեթավորման 1 արտադրամաս՝ կառուցված Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում, Մեղրի համայնքում առկա է՝ գործարկված 35 սառնարա-նային պահեստ, որից 2-ը միջազգային կառույցների աջակցությամբ, 33-ը՝ մասնավոր ներդրումներով ստեղծված, և 5 փաթեթավորման ենթակառուց-վածքներ: 4) ՀՀ Կոտայքի մարզ – Նոր Հաճն համայնքի Նոր Գեղի գյուղում գործարկվել է 100 տոննա հզորությամբ սառնարանային տնտեսություն: 5) ՀՀ Լոռու մարզ – Ստեփանավան համայնքում ՄԱԿ-ի զարգացման ներդրու-մային ծրագրով գործում է «Լոռվա հատիկ» հատիկաընդե-ղենի փաթեթավորման կայան: 6) ՀՀ Գեղարքունիքի մարզ – Վարդենիս համայնքի Ավազան բնակավայրում 2024 թվականին	

				մասնավոր ներդրողի կողմից նախատեսվել է կառուցել 10-15 տոննա տարողությամբ սառնարանային տնտեսություն: Միաժամանակ հայտնում եմ, որ սառնարանային տնտեսությունների կառուցման կամ վերազինման նպատակով Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է ՀՀ Արմավիրի, Կոտայքի, Տավուշի մարզերի և Երևան քաղաքի 9 շահառուի լիզինգի հայտ՝ 993.2 մլն դրամի չափով:	
16	Պարենային անվտանգության համակարգի մարտահրավերներին համահունչ բարելավված որակավորում ունեցող կադրային ներուժ	16.1 Ագրոարդյունաբերական համալիրի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստում և, կարիքի դեպքում, ուսումնական ծրագրերի պարբերաբար վերանայում՝ տեխնիկական և տեխնոլոգիական զարգացումներին համապատասխան	Վերանայել է 2819 «Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն» մասնագիտության «Պարենային ապրանքների որակի փորձագետ» որակավորման պետական կրթական չափորոշիչը, մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը: Մշակվել է «Ապրանքների փորձաքննություն» ուսումնական ձեռնարկը: ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2421-Լ հրամանով հաստատվել է «Պատվաստողների (վակցինատոր) պատրաստման կարգը հաստատելու մասին» հրամանը և	2023 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՀ ԿԳՄՍ նախարարի թիվ 160-Ն հրամանով հաստատվել է արդիական պահանջներին համապատասխանող պետական կրթական չափորոշիչը: Տպագրվել է «Ապրանքների փորձագիտական» ուսումնական ձեռնարկը: Ներկա պահին գործող կարգով և պայմանագրով մինչև նոյեմբեր ամիսը պատրաստվել է 17 վակցինատոր, պայմանագրի կնքումից հետո նախատեսվում է	

			վերաստորագրման փուլում է գտնվում «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում «Պատվաստող (վակցինատոր)՝ գյուղատնտեսական կենդանիների» պատրաստման հնգօրյա և վերահավաստագրման երկօրյա դասընթացների կազմակերպման եռակողմ պայմանագիրը: Վերանայվել են միջին մասնագիտական կրթության ծրագրերը, դրանք գնահատվել են և փոփոխվել պետական կրթական չափորոշիչ-ներին (ՊԿՉ) համապատասխան: Միջին մասնագիտական կրթության ոլորտում անցում է կատարվում ուսուցման դուալ ձևին, երբ ուսանողների ուսուցման ժամանակի 60-70%-ը հատկացված է գործարանային ուսուցմանը, որպես կանոն ոլորտի գործատուների մոտ: Մշակվում կամ վերանայվում են բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթության ծրագրերը (ՄԿԾ): Դրանք գնահատվում են աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության տեսանկյունից (այդ նպատակով ֆակուլտետներին կից ստեղծվում են ագրոարդյունաբերական խորհուրդներ: 2023 թվականի ապրիլին ստեղծվել է Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի արդյունաբերական խորհուրդը: Արդյունաբերական խորհուրդ ստեղծվել է նաև Ագրոնոմիական ֆակուլտետին կից: Արդյունաբերական խորհուրդները կոչված են ծառայելու որպես կրթություն-մասնավոր	մինչև տարեվերջ իրականացնել վակցինատորների պատրաստ-ման և վերահավաստագրման դասընթացներ (մեկ առաջին փուլին՝ շուրջ 9 մասնակից և երեք 2-րդ փուլի՝ շուրջ 30 մասնակից): Վերանայվել են 11 միջին մասնագիտական կրթության ծրագրերը: Մշակվել է միջին մաս-նագիտական կրթության դուալ ուսուցման ձևով 7 ծրագիր: ՀԱԱՀ մշակման փուլում է 36 ՄԿԾ, որոնցից ՀԱԱՀ գիտական խորհրդով 2023 թվականին հաստատվել է 3-ը, առաջիկա Գիտխորհրդի քննարկմանը կներկայացվեն ևս 4-ը: 15 ՄԿԾ գնահատման փուլում է ՀԱԱՀ Որակի գնահատման և ապահովման կենտրոնում (ՈԳԱԿ):	

			հատված երկխոսության հարթակ: Նման խորհուրդներ են ստեղծվում Ագրարային ճարտարագիտության, (Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետներին կից) և համաշխարհային միտումների տեսանկյունից (այդ նպատակով բենչմարքինգ է իրականացվում արտասահմանի բարձր վարկանիշ ունեցող ագրարային համալսարանների հետ ՄԿԾ-երի հետ): ՀԱԱՀ առաքելությունն ու ռազմավարությունը հիմնված են կայուն զարգացման և պարենային անվտանգության հայեցակարգերի վրա: Վերանայված ՄԿԾ-երը գնահատվում են նաև ՀԱԱՀ առաքելությանն ու նպատակներին համապատասխանելու տեսանկյունից: Ամբողջապես վերանայվել է ուսանողների պրակտիկայի անցկացման կոնցեպտը՝ ՀԱԱՀ ուսանողներն այժմ ունեն աշխատանքային կիսամյակ, որն ամբողջապես անցնում է գործատուների մոտ, ինչը հնարավորություն է տալիս մտնել աշխատաշուկա մասնագիտական աշխատանքային փորձով:	Աշխատանքային կիսամյակի շնորհիվ ուսանողների ավելի քան 60 տոկոսը աշխատանքի առաջարկ է ստացել: Բարելավված «Ագրարային մենեջմենթ» կրթական ծրագիրը անցել է ծրագրային հավատարմագրում Գերմանիայի Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի (ՎԿԳՀ) հետ համագործակցությամբ՝ ACQUIN միջազգային կազմակերպության կողմից:	

		16.2 Անասնաբույժ մասնագետների վերապատրաստում	Մշակվել է «Անասնաբույժի որակավորում ունեցող մասնագետների վերապատրաստման կարգը հաստատելու մասին» նոր իրավական ակտ, ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: 2023 թվականի մայիսի 23-27-ը համալսարանի Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտի և Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոնի գիտաշխատողներից մասնակցել են ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալության ֆինանսավորմամբ կազմակերպված դասընթացին: Շարունակվել է սպանդանոցի անասնաբույժ-փորձագետների վերապատրաստման դասընթացը, վերջինս ավարտողներին տրամադրվում է հավաստագիր:	Սպանդանոցի անասնաբույժ-փորձագետների վերապատրաստման դասընթացին մասնակցել է 85 դիմորդ:	
		16.3 Դպրոցներում ագրոտեխնոլոգիական մասնագիտություններ ի ոլորտի նկատմամբ հետաքրքրության խթանման նպատակով Հանրապետության 10 մարզերի ավագ դպրոցներում «Ագրոտեխնոլոգիա» դասընթացի ներդրում, մասնագիտական կողմնորոշման ակումբների, խմբակների ձևավորում	ՀԱԱՀ-ում մշակվել է «Ագրոտեխնոլոգիա» դասընթացի համապարփակ ծրագիր: Այն ներդրվել է փորձնական Սյունիքի և Տավուշի մարզերի ավագ դպրոցներում: Ներդրմանը աջակցելու պատրաստակամություն էին հայտնել Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ), «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամը և այլ կազմակերպություններ: Ի դեպ ՊՀԾ-ի հետ քննարկվում է 8-9-րդ դասարաններում ագրոտեխնոլոգիական խմբակների ստեղծման հնարավորությունն այն դպրոցներում, որտեղ ՊՀԾ-ի կողմից ստեղծվել են գյուղատնտեսական ենթակառույցներ՝ ջերմատներ, այգիներ, հատապտղանոցներ և այլն:	Հայաստանի Հանրապետության 2 մարզի 11 դպրոցներում (Տավուշի մարզի Դիլիջանի և Իջևանի ավագ դպրոցներում, և Սյունիքի մարզի 9 դպրոցներում՝ Սիսիանի, Գորիսի համար 1 և 4 ավագ դպրոցներին, ինչպես նաև Բռնակոթի, Անգեղակոթի, Շաքիի, Շաղաթի, Շամբիի, Լորի միջնակարգ դպրոցների) գործում են 21 ագրոտեխնոլոգիական խմբակներ (11 խմբակ 10-րդ դասարանի և 10՝ 11-րդ դասարանի աշակերտների համար): Ընդհանուր առմամբ	

	ՀԱԱՀ-ն առաջարկությունների փաթեթ է ներկայացրել ԿԳՄՍՆ նաև Սյունիքի և Տավուշի ավագ դպրոցներում կրեդիտային համակարգի պիլոտային ծրագրի ներդրման վերաբերյալ: Նախատեսվում է, որ մասնագիտական առարկաների շրջանակում ԲՈՒՀ-ի և դպրոցների միջև կմշակվեն հետազոտական ծրագրեր, որոնցում հաշվի կառնվի շրջանի բնակլիմայական, տնտեսավարման և այլ առանձնահատկությունները: Համագործակցությունը հնարավորություն կտա մարզային դպրոցների աշակերտներին և ուսուցիչներին ընդգրկվել ՀԱԱՀ-ի Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող մրցույթներին, կարճաժամկետ դասընթացներին, հանդիպել պոտենցիալ գործատուների հետ, մասնակցել մասնագիտական կողմնորոշման միջոցառումներին: Ծրագրով նախատեսվում է մեխանիզմների ստեղծում ուսուցչական կոլեկտիվի ներուժի զարգացման ուղղությամբ: «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի «Նորարար ջերմատուն», «Նորարար այգի» խմբակների ծրագրերը երաշխավորվել են գործածության: Խմբակների իրականացմամբ կամրապնդվեն հանրակրթական հենքային ուսումնական պլանի ԲՏՃՄ բնագավառի առարկաների գիտելիքներն ու հմտությունները:	նշված դպրոցներում միասին վերձրած 259 աշակերտ ուսուցանվում է ՀԱԱՀ-ի մշակված և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված ծրագրով:	
	Հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակում ՀՀ Տավուշի մարզի դպրոցներում ստեղծվել են մասնագիտական կողմնորոշման խմբակներ՝ սովորողների կարողությունները ճիշտ գնահատելու նպատակով:	ՀՀ Տավուշի մարզի 80 դպրոցներում ստեղծվել են մասնագիտական կողմնորոշման խմբակներ:	

		16.4 Թվային տեխնոլոգիաների, արհեստական բանականության կիրառման, հիվանդությունների կառավարման ծրագրերի մշակում և ներդրում	Գյուղատնտեսության թվայնացման և ճշգրիտ գյուղտնտեսության վարման նպատակով ՀԱԱՀ-ում հիմնադրվել է դրոնների լաբորատորիան, որը կահավորված է 4 տիպի դրոններով, որից մեկը նախատեսված է բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների մշակման և իրականացման համար: «Հայաստանում աշխատուժի զարգացման» ծրագրի շրջանակում ՀԱԱՀ-ն կազմակերպել է «ԱԹՍ-ների (դրոնների) կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում» անվճար դասընթաց:	Ստեղծված լաբորատոր բազայի հիման վրա իրականացվում է ճշգրիտ գյուղատնտեսություն մագիստոսական կրթական ծրագիրը, իրականացվում են ՀՀ բարձրագույն գիտության և կրթության կոմիտեի աջակցությամբ ոռոգման նորագույն տեխնոլոգիաների հետազոտման և ներդրման աշխատանքներ: Դասընթացի միջոցով մասնակիցները ձեռք են բերել գիտելիքներ և գործնական հմտություններ ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական հողատարածքներում սրսկումների իրականացման ոլորտում՝ դառնալով ագրոդրոնի օդաչու/օպերատոր (ագրոպիլոտ):	
		16.5 Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ աջակցություն գիտակրթական համակարգերի զարգացմանը և շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստում	ՀԱԱՀ Ջրային և հողային ռեսուրսների կառավարման ամբիոնին կից ստեղծվել է Ջրային և հողային ռեսուրսների կառավարման տեխնոլոգիական հետազոտական կենտրոնը, որը կահավորված է արդի թվային գեոդեզիական գործիքներով, ջրաչափերով, խոնավաչափերով, եղանակի տեսության ավտոմատ կայաններով: Այս սարքավորումները կիրառվում են ուսումնական գործընթացում, հետազոտական և խորհրդատվական աշխատանքներ կատարելիս: ՀԱԱՀ-ն և «Գեովայք» ՓԲԸ-ն անցկացնում են վերապատրաստման անվճար դասընթաց	Թվային տեխնոլոգիաների կիրառման արդյունքում հանրապետության տարբեր գյուղատնտեսական գոտիների համար մշակվել են կաթիլային և անձրևացմամբ ոռոգման ռեժիմները, որոնք հաստատվել են Էկոնոմիկայի նախարարության կողմից և երաշխավորվել արտադրությունում ներդնելու համար:	

			«Երկրատեղեկատվական համակարգերը (ԵՏՀ) և հեռահար զոնդավորումը կանաչ գյուղատնտեսությունում» թեմայով՝ ԵՄ «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) նախագծի աջակցությամբ: Վերապատրաստման դասընթացը նախատեսված է ՀԱԱՀ-ի, ինչպես նաև այլ հաստատությունների տեխնիկական-մասնագիտական աշխատակազմի և ճշգրիտ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող փորձագետների, կրտսեր մասնագետների և ուսանողների համար: Դասընթացի ավարտին մասնակիցները ձեռք կբերեն՝ ԵՏՀ և հեռահար զոնդավորման գիտելիքներ, տարածական տեղեկույթի տնօրինման, վերլուծության և ներկայացման ծրագրակազմային գործիքների ու եղանակների օգտագործման հմտություններ, ինչպես նաև կանաչ գյուղատնտեսության ոլորտում այդ ամենի տարբեր կիրառումների հետ աշխատելու փորձ: 2023 թվականի ապրիլից ֆինանսավորվում է ՀՀ ԳԱԱ Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոնում իրականացվող «Միջատասպան և պարարտացնող հատկություններով օժտված մանրէաբանական միջոցների մշակում գյուղատնտեսական բույսերի պաշտպանության համար» փորձարարական մշակումների նախագիծը, որի շրջանակներում նախատեսվում է մշակել գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանության համար արտահայտված միջատասպան ակտիվությամբ կենսաբանական		

			(մանրէաբանական) միջոցներ: Նախագծի վերջնարդյունքում ակնկալվում է, որ տեխնոլոգիական գործընթացը կավարտվի, և կարող է լինել սահմանված ստանդարտներին և կարգավորումներին համապատասխանող արտադրանք (TRL 8):		
17	Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հավաքագրման համակարգի բարելավում	17.1 Գյուղացիական տնտեսավարողների գրանցման և գյուղատնտեսական արտադրանքի հայտարարագրման օրենսդրական դաշտի մշակում, հաստատում և փուլային ներդրում:	Մշակման ավարտական փուլում է գտնվում «Գյուղատնտեսական քաղաքականության և գյուղատնտեսական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որով ներառված են նաև գյուղացիական տնտեսավարողների գրանցման և գյուղատնտեսական արտադրանքի հայտարարագրման պահանջ սահմանելու մասին դրույթներ: Բացի այդ, 2020 թվականի հուլիսից մեկնարկել է «Խաղողի այգիների ռեեստրի ստեղծում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ ➢ ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում իրականացված տնկարկների քարտեզագրման աշխատանքների և օդալուսանկարահանված հատվածների տվյալներով ստեղծված՝ շուրջ 40 000 հա մակերեսով օրթոֆոտոհատակագծի հիման վրա իրականացվել է փաստացի առկա խաղողի տնկարկների նույնականացման, սահմանագծման, հստակ մակերեսների որոշման աշխատանքները: Վերոնշյալ մարզերում փաստացի խաղողի տնկարկների գույքագրման, նույնականացման, սահմանագծման, հստակ մակերեսների որոշման աշխատանքները ամբողջությամբ ավարտվել են:	Նույնականացվել և սահմանագծվել է շուրջ 11 830 հա փաստացի խաղողի այգի, մասնավորապես. Արմավիրի մարզ՝ 5395 հա, Արարատի մարզ՝ 3950 հա, Արագածոտնի մարզ՝ 570 հա, Տավուշի մարզ՝ 962 հա, Վայոց ձորի մարզ՝ 950 հա:	

			➢ Տնկարկների պատկանելիության որոշման նպատակով, կատարվել են փաստացի այգիների հողատարածքների սահմանների՝ գույքային կադաստրի սահմանների հետ համադրման աշխատանքները: ➢ Իրականացվել են ֆերմերների կողմից մշակվող տնկարկների վերաբերյալ տառաթվային տվյալների հավաքագրման աշխատանքները, ինչը հիմք կծառայի էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազայի ստեղծման համար: ➢ Հավաքագրված տվյալների հիման վրա ամբողջականացվել են փաստացի խաղողի այգետարածքների գույքագրման, նույնականացման, սահմանագծման, հստակ մակերեսների որոշման, խաղողի տնկարկները բնութագրող անձնագրերի ստեղծման աշխատանքները: Նույնականացված այգետարածքների շուրջ 80%-ի բնութագրերն ամբողջական են (խաղողագործներ + խաղողի այգիների բնութագրեր + գնահատված բերքատվություն + այգետարածքի վիճակի գնահատում): Ընթացքի մեջ են միասնական էլեկտրոնային տեղեկատվական հարթակի ստեղծման աշխատանքները: Աշխատանքների կատարմանը աջակցում է GIZ PSD TVET ծրագիրը, ներգրավելով միջազգային փորձագետի: Բացի այդ մեկնարկել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) «Digital Technologies in support of Agriculture Value Chains and Rural	Գույքային կադաստրի սահմանների հետ համադրման աշխատանքների արդյունքում վեր է հանվել շուրջ 80 000 կադաստրային գույքային միավոր, որոնք փաստացի օգտագործվում են խաղողի մշակության նպատակով:	

			Development» ծրագիրը, որը աջակցելու է խաղողի տնկարկների ռեեստր համակարգի տեղեկատվական հարթակի ստեղծման աշխատանքներին:		